

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 9-ի N 1083-Ն որոշումը ու 2005 թվականի փետրվարի 24-ի N 309-Ն որոշմամբ սահմանված կարգի 19-րդ կետով

կարգադրում եմ՝

1. Մարզի Սևան համայնքի Նալբանդյան 36 բնակելի շենքի 1-ին մուտքի բնակիչների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցության տրամադրման գործառույթները կազմակերպելու համար ստեղծել աջակցող աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝
Մուշեղյան Յու. - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ, խմբի ղեկավար
Բուդումյան Խ.. - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ
Բիծյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի վարիչ
Պետրոսյան Ա. - քաղաքաշինության նախարարության պետական տեսչության Գեղարքունիքի տարածքային ստորաբաժանման պետի պաշտոնակատար /համաձայնությամբ/
2. Հանձնաժողովին՝
 - 1) վկայագրերի միջոցով աջակցություն ստանալու իրավունք ունեցող անձանց ցուցակները մինչև ս/թ հոկտեմբերի 30-ը ներկայացնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին.
 - 2) աջակցություն ստանալու իրավունք ունեցող անձանց հետ պայմանագրերի կնքման գործընթացը ավարտել ս/թ նոյեմբերի 15-ին:
 - 3) կատարված աշխատանքների վերաբերյալ յուրաքանչյուր շաբաթ զեկուցել մարզպետին:
3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

